# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 45-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2019թ-ի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2019թ-ի դեկտեմբերի 20-ի թիվ 10 նիստի

1. Շահումյան համայնքի 2020թ-ի բյուջեն հաստատելու մասին:
2. Շահումյան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ

ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 46-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,, Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ **հ ա մ ա յ ն ք ի  ա վ ա գ ա ն ի ն.**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է

Հաստատել Շահումյան համայնքի 2020թ-ի բյուջեն:

1. Եկամուտների գծով

**Ընդամենը** - 76 595 100 /յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր/ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - 76 595 100 /յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր/ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 0 /զրո/ դրամ

2. Ծախսերի գծով

**Ընդամենը** - 76 595 100 /յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր/ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի մասով - 76 595 100 /յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր/ դրամ
- ֆոնդային բյուջեի մասով - 0 /զրո/ դրամ:

Կողմ -5  Դեմ -0  Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 38462, 37897, shahumyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 47-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ու Մ Է

1. Տալ համաձայնություն Շահումյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն: Օտարվում են հողամասեր 2 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող Շահումյան համայնք Դիլիջան մայրուղի 3 փկղ. 17 հող հասցեում, 06-084-0201-0105 ծածկագրով 0.06127 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամաս, 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող Շահումյան համայնք Դիլիջան մայրուղի 3 փկղ. 1/1 հող հասցեում, 06-084-0201-0104 ծածկագրով 0.05787 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամաս, 470 000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ օտարման մեկնարկային արժեքով:

2. Աճուրդի մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդով վաճառվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ